Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՄԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՂԱՔ ՄՈՍԿՎԱ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

Արման Խաչատրյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Ռուսաստանի Դաշնություն՝ քաղաք Մոսկվա:

2017 թվականի օգոստոսի 22-ից 23-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Ռուսաստանի Դաշնության Հատուկ կապի գլխավոր կենտրոն դաշնային պետական ունիտար ձեռնարկության ղեկավար Օ. Ն. ՌԻԲԱԼԿԻՆ:

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

1993թ. դեկտեմբերի 23-ին Աշխաբադում ԱՊՀ մասնակից-երկրների կառավարությունների կողմից ստորագրված՝ «Հատուկ կապի առաքումների միջպետական փոխանակման մասին» Համաձայնագրի շրջանակներում փոխշահավետ համագործակցությանը վերաբերող հարցերի քննարկում

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

Հանդիպման ընթացքում քննարկվել են հատուկ կապի ծառայությունների մատուցման որակի բարձրացմանը, փոխադրման ընթացքում առաքանիների անվտանգության ապահովմանն ուղղված հիմնական գործողությունները, նոր տեխնոլոգիաների ներդրման հարցերը:

Քննարկվելու են նաև երկու պետություններում ձեռնարկություններին, հիմնարկներին, հասարակական և այլ կազմակերպություններին, քաղաքացիներին և զինվորական մասերին ծառայությունների մատուցման, թանկարժեք մետաղների, քարերի, դրանցից պատրաստված իրերի, փոխառությունների, արժեթղթերի, գաղտնի և հույժ գաղտնի փաստաթղթերի ընդունման, առաքման և դրանց հասցեատերերին հանձնման գործընթացների առավել արդյունավետ կազմակերպման մոտեցումները:

Վերոնշյալ հանդիպումը ուղղված էր հատուկ կապի ոլորտի խնդիրների լուծման նպատակով համատեղ աշխատանքների իրականացմանը, գործարար կապերի խորացմանը և ոլորտի մասնագետների միջև համագործակցության կայացման նպաստմանը:

- **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

Ռուսաստանի Դաշնության Հատուկ կապի գլխավոր կենտրոն դաշնային պետական ունիտար ձեռնարկության ղեկավարների հետ: